

ԱՄԱՆՈՐԻ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Ա. Ա. ՕԴԱՐԱՇՅԱՆ

Ժողովրդական տոնացույցին ուղեկցող բանահյուսության առանձնահատկությունը տարվա տոների հետ կապված լինելն ու նրանց բովանդակությունն արտահայտելն է, Յուրաքանչյուր տոնի կատարման ժամանակով և զաղափարական բովանդակությամբ են պայմանավորված բանահյուսական համապատասխան հատվածի բնույթը և ժանրային առանձնահատկությունների ամբողջականությունը: Ժողովրդական տոնացույցի բանահյուսության ուսումնասիրությունը որոշակի կարևորություն ունի ինչպես տարեկան ցիկլի, այնպես էլ առանձին տոների ժխսափնջի վերհանման առումով: Ըստ այդմ էլ Ամանորին ուղեկցող բանահյուսությունը շատ բան է ասում տոնացույցային մշակույթի ամբողջության մեջ այդ տոնի գրաված տեղի և դերի մասին: Այդ իսկ պատճառով Ամանորի տոնական ցիկլի ուսումնասիրությունն անհնար է առանց նրա հետ կապվող ժողովրդական բանահյուսության քննարկման:

Դեռ միջնադարից սկսած և XIX—XX դդ. մեծ թափ ստացած բանահյուսական-ազգագրական գրառումների ու հրապարակումների մեջ Ամանորի երգաշարը զրավեց իր արժանի տեղը և այնուհետև դարձավ ուսումնասիրողների ուշադրության առարկան: Այդուամենայնիվ, ցարդ ամբողջական որևէ ուսումնասիրություն չի նվիրվել խնդրո առարկային*:

Ամանորի ծխակարգին ուղեկցող ժողովրդական բանահյուսության ամբողջ համակարգից առանձնացվում են որոշակի խումբ կազմող երգեր: Դրանցից առաջինը «Ավետիս» կամ «Ալելուիա» անունով հայտնի երգաշարն է, որ ուղեկցում է Ամանորի ծխակարգի նույնանուն ծեսին: Երգաշարն այդ անունը ստացել է «Ավետիս» կամ «Ալելուիա» հանգերգից, որ նշանակում է ճուրախ լուր¹ և ազդարարում է Քրիստոսի ծնունդը, որը և սույն ծեսի հիմնական բովանդակությունն է: Այն ազգագրական շրջաններում, որտեղ նոր տարվա տոնը կրել է «Կաղանդ» անունը, երգաշարին ուղեկցել է «Կաղանդ-Կալանդոս» կրկներգը²:

Խարբերդ, Արաբկիր, Բալու, Պոլիս քաղաքներում և նրանց շրջակայքում պահպանվել է նաև ծեսի բնիկ, ազգային անվանումը՝ «կախու-կախուկ-գոտեկախ»: Թեպետ Սյունիքին և Արցախին նվիրված նկարագրությունների մեջ չի հիշատակվում ծեսի սույն անվանումը, սակայն այն ըստ էության նույնն է եղել: Պատմական Հայաստանի բոլոր ազգագրական շրջաններում 12—14

* Սույն քննությունը մի հատված է հեղինակի «Ամանորի տոնական ծխակարգի երգաշարը» անտիպ մենագրությունից:

¹ Հր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 358—359:

² Կաղանդ ծագում է լատիներեն Calendae (կոչել) բառից, որ հայերենում ստացել է ամեն ամսի և նոր տարվա առաջին օրվա նշանակությունը (սնոր բառգիրք հայկազյան լեզվի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1037): Անանիա Շիրակացու մոտ կարգում ենք. «Զի՞ն է կաղանդ և կաղանդիկոս. կաղանդն ամսամուտ է և կաղանդիկոսն նախասկզբնակ օր տարոյն» (Ան անիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 69):

տարեկան պատանիները շրջում էին բակից բակ և, երգեր երգելով, նվերներ էին պահանջում: Երդիկներին կախում էին (իրենք էլ մինչև գոտին կախվելով տոպրակ, քթոց, սալա, գոգրա (դդում), փայտի պուտուկ, գուլպա, մի խոսքով՝ ինչ հնարավոր էր: Տանտերերը պարտավոր էին դրանք լցնել չոր մրգով, միութամանակ ղնելով գաթա, հավ, ձու և այլ ուտելիքներ: Քաղաքներում երբեմն նվիրաբերում էին նաև մանր դրամ: Հավաքած բարիքով ուրախության սեղան էին բացում, որին կարող էին մասնակցել միայն տվյալ խմբի անդամները: Նույն գյուղում կազմվում էին մի քանի այդպիսի խմբեր:

Արարկիրում և նրա շրջակայքի գյուղերում ծիսական այդ սովորությունը տեղի էր ունենում Քրիստոսի ծննդյան և մկրտության տոնի օրը՝ հունվարի 6-ին, Բուլանըխում և Սիսիանում՝ ծննդյան տոնի ճրագալույցի երեկոյան:

Թեպետ «Ավետիս-Ալելուիա» երգաշարը հիմնականում կապված էր Ծննդյան տոնի հետ, սակայն որոշ ազգագրական շրջաններում այն հանդես էր գալիս նաև այլ տոնակատարությունների ժամանակ: Առաջին հայացքից այդ երևույթը կարող է պատահական թվալ, սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ունի իր տրամաբանական հիմքը:

Պատմական Հայաստանի մեծ մասում այդ ծեսը իր երգաշարով կապվում էր Նոր տարի—Բարեկենդան—Տեառնդառաջ—Ջատիկ—Նավասարդ համակարգին: Դրանով մի կողմից ընդգծվում էր դրանց գաղափարական ընդհանրությունը, իսկ մյուս կողմից՝ մատնանշվում էր ծեսի և երգաշարի նախաքրիստոնեական ծագումը: Հիշյալ տոնական համակարգի գաղափարական ընդհանրությունը հիմնականում դրսևորվում էր մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքը արտահայտող ծիսակարգով, որը նաև Նոր տարվա ու Ծննդյան տոնի բնորոշ հատկանիշն էր:

Իզուր չէ ն. Ադոնցը Բարեկենդանը կապում Ատտիսի հարության տոնին: Ըստ նրա՝ բնության զարթոնքին, դարնան պաշտամունքին նվիրված ամբողջական տոնական ցիկլը բաժանված է երկու հատվածի՝ Բարեկենդանի և Ջատիկի: Այդ արհեստական բաժանման, ձևափոխման հետքերը կորցնելու համար ընդհանուր քրիստոնեական եկեղեցին Բարեկենդանն անվանել է պանրուտիք, որպեսզի ուտիքի օրերի անվան տակ թաքցվի տոնի իսկական էությունը³: Հետևաբար, Բարեկենդանը կարելի է դիտել որպես մեռնող և հարություն առնող քնության պաշտամունքին նվիրված տոնական ցիկլի սկիզբ, իսկ Նավասարդը՝ վերջ: Համեմատական ազգագրությունից ևս հայտնի է, որ զարգացման նույն աստիճանում գտնվող բոլոր ժողովուրդների մոտ էլ մեռնող ու հարություն առնող բնության պաշտամունքին նվիրված տոնական ցիկլը շատ երկար էր տևում՝ գարնան սկզբի առաջին նշաններից, մինչև բերքահավաքի վերջը:

Սա է պատճառը, որ «Ավետիս-Ալելուիա» երգերը իրենց մեջ այդքան շատ են կրում Նոր տարվա տոնակատարության գաղափարախոսությանը բնորոշ գծեր⁴ և չնայած քրիստոնեության մուտքով կապվել են Քրիստոսի ծննդյան տո-

³ Ղ. Ալիշան, Յուզիկը հայրենեաց հայոց, Վենետիկ, 1920, հ. Ա, էջ 87—88, ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ (Հին հայոց աշխարհայացքը), Փարիզ, 1948, էջ 288:

⁴ Այդ կապը նկատելի է նաև Աս. Մնացականյանը («Հայկական զարդարվեստ», Երևան, 1955, էջ 563—566, նույնի՝ «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», Երևան, 1956, էջ 76—77 և 327—334),

նին, սակայն, նույնիսկ կատարման ժամանակով, մասամբ մնացել են իրենց նախկին տեղում: Այսպես՝ Նոր Նախիջևան քաղաքում⁵ այդ ծեսը կատարվում էր դեկտեմբերի 31-ի երեկոյան, գյուղերում՝ հաջորդ օրը, Կեսարիայում, վանում, Քղիում, Նփրկերտում՝ դեկտեմբերի 31-ի գիշերը:

Նոր տարվա տոնի հետ ունեցած առնչությունը «Ավետիս-Ալեկուհաների» մեջ արտահայտվում է մերթ Նոր տարվա շնորհավորանքների և բարեմաղթությունների բանաձևով, մերթ բովանդակած առանձին հարցերով՝ առանց Նոր տարվա մասին հիշատակության: Այս երգերի նպատակն էր հմայական ծիսակատարության մեջ և խոսքի կախարդանքով նախապատրաստել նոր սկսվող տնտեսական տարվա բարեկեցությունը, որով պայմանավորվում էր նաև մարդկանց առողջությունն ու երջանկությունը: Այդ ճանապարհով հիշյալ երգերի մեջ իր արտահայտությունն է գտել Նոր տարվա տոնակատարությանը յուրահատուկ այն ծիսա-հմայական առանձնահատկությունը, ըստ որի պարտադիր կերպով օրհնվում (կաղանդվում) էր ոչ միայն ընտանիքի յուրաքանչյուր անդամը, այլև տնտեսության մեջ որևէ դեր կամ նշանակություն ունեցող իրը, առարկան, կենդանին:

Այդ տեսակետից բնորոշ է մի երգ, որտեղ շատ բացահայտորեն Նոր տարվա տոնակատարության վերահիշյալ առանձնահատկությունը երևան է գալիս Քրիստոսի ծննդյան մասին պատկերացումների հետ զուգորդված.

... Այս նորածին տէրն և Արքայն, Աւետիս,
Օրհնէ զձեզ զամենասեան, Աւետիս,
Եւ զընտանիս ձեր միարան, Աւետիս,
Ձեր հեռաւորն գայ շուտով, Աւետիս,
Եւ ձեր ոչխարն սուրումով, Աւետիս,
Կարասն ձեր լցուի գինւով, Աւետիս,
Եւ տունս ձեր հազար բարւով, Աւետիս...
Ձեռ ողորմի և ձեր նախնեանց, Աւետիս,

⁵ Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստով) հայերի սույն ծեսը տարբերվում է մնացած ազգագրական շրջանների արարողություններից (Խ. Փորքչեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965, էջ 15—29), նաև՝ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, 1959 և 1964 թթ. Ռոստովի մարզի Մյասնիկյանի անվան շրջանում մեր հավաքած նյութերը: Համեմատությունը անկասկած է դարձնում ուկրաինական և նրանց հարևանությամբ ապրող Նոր Նախիջևանի հայերի ծեսի փոխադարձ առնչությունների փաստը, որ ինքնին հետաքրքիր երևույթ է: Հիշյալ ծեսի ծագման հարցին անդրադառնալիս Նոր Նախիջևանի հայերի մոտ նրա ընդունած արտահայտությունը դիտվում է որպես միջանկյալ օղակ և օգնում անառակելիորեն քրիստոնեության հետ ձևավորված հին ծեսի և նրա երգերի համեմատական վերլուծությանը: Սույն հոդվածում այդ հարցերին չենք անդրադառնում: Ասենք միայն, որ հիշյալ ծեսի և նրա երգերի ծագման նույնիսկ նախնական ուսումնասիրությունը հետաքրքիր եզրակացությունների է հանգեցնում: Հիշյալ ծեսը և երգերը առկա են բյուզանդական պետականությանն ու մշակույթին հարակից բոլոր ժողովուրդների կենցաղում: Քրիստոնեական համընդհանուր բնույթից բացի, մի շարք հատկանիշներ հնարավորություն են ընձեռում ավելի որոշակիորեն որոնել նրանց ծագման միջավայրը: Համեմատան երգեր հանդիպում են քրիստոնեություն ընդունած բոլոր ժողովուրդների մոտ: А. Н. Веселовский и Я. Румынские, славянские и греческие коляды. (Записки Императорской АН, т. 45, № 4, СПб., 1883, очерк VII); В. И. Чичеров, Зимний период русского народного земледельческого календаря, XVI—XIX вв., М., 1957; P. Gagarin, Obrzed koledovania u Slowian i u Rumonow, Krakow, 1933.

Եւ ամենայն ուղղափառացն, Աւետիս,
Տայ ձեր բարեացն լիություն, Աւետիս,
Եւ ձեր որդւոցն առողջութիւն, Աւետիս,
Ննջեցելոց ձեր ողորմի, Աւետիս,
Եւ պարգեւէ արքայութիւն, Աւետիս⁶:

Ըստ բնապաշտական ըմբռնումների, հմայական գործողություններով հնարավոր էր նոր տարվա սկզբին մարդուց հեռացնել չարը, փորձանքը, աղքատությունը և ընդհակառակը՝ առաջացնել բարին, հաջողությունը, առատությունը, այն համոզմամբ, որ ամբողջ տարին այդպես էլ կշարունակվի:

Ամանորյա երգերում չարի և բարու պայքարի մոտիվը ամբողջանում էր օրհնաբանական բանաձևով, որով ենթադրվում էր ապահովել բարու հաղթանակը և չարի պարտությունը:

Օձու լեզուն էրկու ճղակ, ալեւուհա,
Մեյնի չարով, մեյնի բարով, ալեւուհա,
Չարին էրթայ վեր սարերուն, ալեւուհա,
Բարին գնայ վեր էսա տուն, ալեւուհա⁷:

Կամ՝

էս տանը կա էրկու լեզու, ալեւուհա,
Մինը բարի, մինը չարի, ալեւուհա,
Չարինը ընդի, բարինը ըստի, ալեւուհա,
Բարին վեր գա ձեզ հետ նստի, ալեւուհա⁸:

Այս երգերի բովանդակության մեջ նախաքրիստոնեական շրջանից եկող մնացուկներից է նաև զոհաբերական հմայության դրսևորումը՝ արտահայտված տանտերերից նվիրատվություն (զոհաբերություն) պահանջելու ձևով: «Ավետիս» շրջելու ծեսի էությունը կապվում էր Ամանորի ծիսափնջի կարևոր կողմերից մեկի՝ ծիսական տրապեզայի հետ, քանզի նվիրատվության հիմնական առարկան Ամանորի ծիսական ուտելիքներն էին (գաթա, հավ, ընկույզ, չորացրած միրգ): Նույնպիսի մնացուկ էր նաև գուշակության հմայության դրսևորումը, որ արտահայտվում էր նվիրատվության (զոհաբերության) հիմնական առարկան՝ գաթան, պահանջելով: Իսկ երգերում անընդհատ հիշատակվող այդ գաթան ըստ իմաստի կապվում էր «Տարի» կոչվող մեծ գաթայի հետ, որը հենց Ամանորի ծիսափնջում տարվա գուշակության ծեսի հիմնական միջոցն էր⁹:

6 Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 12—15:

7 «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. 2, Մոսկվա—Վաղարշապատ, 1906, էջ 27—28:

8 «Ազգագրական հանդես», գիրք 10, 1903, էջ 252:

9 Ա. Ա. Օդաբաշյան, Քրիստոնեական Ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրումներ (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 3), Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 438:

Ամանորի ծիսակարգի երգաշարի մեջ ղոհարերական հմայության սիմվոլիկ արտահայտությունը առկա է նաև նվիրատվությունից հրաժարվող տանտերերին ուղղված ծաղրի և սպառնալիքի արտահայտությունների մեջ:

Կաղանդոսը՝ գոս,
Ըլեք տվեք երկու կոկոզ.
Վով էր շտվեց՝
Իրանց հավուն ճիվը կը կոտրեմ.
Էկեր (եթե) հավ չունին՝
Ճոռն ճիվը կը կոտրեմ.
Կաղանդոսը՝ գոս¹⁰:

Նման սպառնալիքներն իրենց ծագումով կապվում են վնասաբեր նմանության հմայության հետ: Ըստ այդ մտայնության, ենթադրվում էր խոսքի հմայական ներգործությամբ իրական վնաս տալ այն տնտեսությանը, որը հրաժարվել է մասնակցել հմայական ղոհաբերական ծիսակատարություններին: Մեսի և նրան ուղեկցող երգերի մեջ այդ մտայնությունը արտահայտվում էր ամբողջ համայնքի բարեկեցությունը ապահովելու խնդրում նրան վերագրվող նշանակությամբ: Եվ եթե հիշենք, որ տարբեր տնտեսություններից հավաքած ղոհաբերությունը (նվիրատվությունը) համարվում էր ծեսին մասնակցած բոլորի համահավասար սեփականությունը, ապա պարզ կդառնա, որ այդ ճանապարհով բոլորն իրենց մասնակցությունն էին բերում ամբողջ համայնքի ապահովությանը: Հետևաբար, նվիրատվությունից (ղոհաբերությունից), որ միևնույն էր թե գույակությունից, հրաժարվողը վտանգի տակ էր դնում ոչ միայն տվյալ տնտեսության, այլ ամբողջ համայնքի նոր տնտեսական տարուց ակնկալվող բարգավաճումը:

Այդ երգերում երբեմն արվում էր մասնակիացում, անձնավորում ոչ միայն երգի բնագրի, այլև ծեսի մեջ: Երգողները հարցնում էին տան փոքրի անունը, ապա երգը՝ առատություն և երջանկություն խոստացող հմայական պատկերներով կապում նրա անվան հետ:

Ճիշտ է, հարցը վերաբերում էր տան փոքրին, մի բան, որ երգի մեջ հատուկ շեշտվում էր, բայց հետաքրքիրն այն է, որ հաճախ տանտերերը անվանում էին նրան, ում կամենում էին և, իհարկե, ամենից առաջ կամ տան նահապետին (համաձայն նահապետական մեծ ընտանիքում տիրող հոգեբանության, նա ներկայացնում էր ամբողջ ընտանիքը), կամ դեռ չամուսնացած, «մուրազ» ունեցող երիտասարդին, որի ամուսնությունն ու պտղավորվելը նույնպես սիմվոլացած էր համապատասխան հարսանեկան ծիսակատարության մեջ: Նոր տարվա այս բնույթի երգերը առնչվում էին հարսանեկան հմայական ըմբռնումներին և երգի մեջ արտահայտվում կենաց ծառի պատկերի միջոցով¹¹:

— Ձեր տղի անուն ի՞նչ ի, ալելուիա:
— Յէկոբ քե ծառէ, ալելուիա:

¹⁰ Ե. Տ եր-Պ ողոսյան, Նոր տարույ տունը հին և նոր հայոց քով, Վիեննա, 1952, էջ 64:

¹¹ Հիշենք հարսանեկան ծիսակատարության համար այնքան բնորոշ կենաց ծառի հետ առնչվող ծիսական փունջը:

— Սեղան յըռոջե խազար բշարին, ալեւուիա,
Կթխեն ի ձեռն նռան գինին, ալեւուիա,
Յէկոր նստէ ծառի տրկին, ալեւուիա,
Մաղեր թալե ծառի ճողին, ալեւուիա,
Յէկոր խեծեր կապուտ քուռակ, ալեւուիա,
Մեջքն ա զարկեր պողպատ-ուրագ, ալեւուիա¹²,

Մի ալլ երգում կրկնվում է նույն պատկերը.

... Ձեր տղի անուն ի՞նչ ի—Վոհան, ալեւուիա
— Վոհան ճութ՝ ճթացաւ, ալեւուիա,
Քեանց բարդի ծառ էրկնցաւ, ալեւուիա,
Ճեօղի իթալ քէաղքի քաղաք, ալեւուիա,
Յըմեն ճեօղին ջուխտում ճրագ, ալեւուիա,
Վերեն ի թառի սինամահանք, ալեւուիա¹³,

Մի ուրիշ «Ավետիսում» «Ձեր տղի անուն ի՞նչ ի» հարցին տրված «Գրի-գոր» պատասխանից հետո երգվում է.

Գրիգորի նախիր դաշտից կուկեայ, ալեւուիա,
Ինոր ոչխար դաշտ կարածայ, ալեւուիա,
Ինոր կիւթան դաշտ կըճըռայ, ալեւուիա:
Տունը տեղ լիյքն ի խացով, ալեւուիա,
Ինոր մառանը լիյքն ի գիյնով, ալեւուիա¹⁴:

Այստեղ արդեն դարձյալ զուգորդվում է նոր տարվա տոնակատարության ամենարնորոշ գիծը՝ օրհնաբանական բանաձևով նոր սկսվող տնտեսական տարվա բարեկեցության ապահովմանը աջակցելու միտումը, հարսանեկան հիշյալ հմայական ըմբռնումների հետ. Սա հնարավոր էր, որովհետև երկու դեպքում էլ նպատակը նույնն էր՝ առաջացնել բարեկեցություն, պտղավորում, արդյունք, ապահովություն և, վերջապես, կյանք:

Հմայական երգերում հատուկ ուշադրության է արժանի տանտերերի հաս-ցեին արված գովասանքը, որով ենթադրվում էր գալիք նոր տարում նրանց ավելի բարեվիճակ տեսնել.

... Աստուն շինած գարնան գեալով, աւետիս,
Փռուած ծալ ծալ ծաղկերով, աւետիս,
Գերան վերան ամպըրու վերեն, աւետիս,
Ալաշ վերեն ծալ ծալ ոսկի, աւետիս,
Խողն վերեն, սոս մարգրիտ, աւետիս,
Սնիր ինի ծառ խնկենի, աւետիս,
Թոնիր ինի քեան զեկեղեցի¹⁵, աւետիս,

¹² «Էմինյան աղագրական ժողովածու», էջ 25:

¹³ Նույն տեղում, էջ 27—28:

¹⁴ Գ. Շ եր ե ն ց, Վանա սաղ, Ա մաս, Թիֆլիս, 1885, էջ 73—80:

¹⁵ Թոնրի պաշտամունքի, այն եկեղեցուն հավասար քնկալելու մասին է վկայում «Թոնրի պսակի» սովորությունը, որ հավասար էր գիտվում եկեղեցական պսակին:

Պտուկ վերէն շիրջ եղունի, աւետիս,
 Տախտակ վերէն բիմու ծածկոց, աւետիս:
 Զի լաճ նստի ծառի տակին, աւետիս,
 Սուֆրեն յառջև խազար բարին, աւետիս,
 Կթխէն ի ձեռ նռան գինին, աւետիս,
 Հայ տանտիկին սօլեր խազի ճըռվըլալեն, աւետիս,
 Գնա խասի գիւռ մառանին, աւետիս,
 Քինէ չըմ ուզէ ձիւմ ու ջորին, աւետիս,
 Կամ տարեկան գեառն ու մաքին, աւետիս,
 Քինէ կուզիմ մաղմ՝ կէօքով, աւետիս,
 Գաթէն էլ վերէն, աւետիս¹⁶:

Ամանորի երգահինջի մեջ տանտերերին ուղղված գովաբանական բնույթի երգերի խումբը ամենից առաջ բնորոշվում է երկնային լուսատուների, հատկապես արեգակի հաճախակի հիշատակմամբ: Այստեղ բանաստեղծական պատկերները կազմվել են տանտերերին երկնային լուսատուների, հատկապես արևի հետ համեմատելով:

... Զեր տունը շեն հետ արևուն,
 Արևն էրկըններ ձեր տըղէյներուն,
 Զարը զատանէր, բարին մոտէյներ¹⁷:

Կամ՝

... Կտեր հողը խնդան փոշի,
 Ծոծը վրէն ծալած ոսկի,
 Դուռը վրէն փերթ ըրէքնակ,
 Կտեր վրէն բոլոր լիսնիակ,
 Տան սները կերոններ,
 Ոսկէ կամար գերաններ¹⁸:

Տանտերերին արեգակի հետ համեմատելը գովասանքի ամենաբարձրագույն ձևն է, բարեկեցության ապահովագրման հմայական արտահայտությունը, մի բան, որ նոր տարվա տոնի շուրջը փնջված ծեսերի հիմնական նպատակն էր: Տանտերերի հասցեին արված ծիսական այդ գովաբանությամբ երգերը կապվում էին նոր տարվա տոնի հիմնական գաղափարախոսությանը:

Մյուս կողմից, երկնային լուսատուների հիշատակումը, մասնավորապես տանտերերին արեգակի հետ համեմատումը, այդ երգերը կապում է արեգակի պաշտամունքի հետ, որը, ինչպես հայտնի է, քրիստոնեությունը ներառավ Քրիստոսի ծննդին և մկրտությանը նվիրված տոնական ծիսահինջի մեջ: Ներքին այդ կապը Ամանորի երգերի մեջ արտահայտվում է Քրիստոսի ծննդի և մկրտության մոտիվների առկայությամբ, որոնք գրեթե միշտ նկարագրական բնույթ ունեն: Հատկապես երեխաներին նվիրված երգերի մեջ Քրիստոսի ծննդի և Մարիամ աստվածածնի ետնամուտ պատկերները պարտադիր էին:

16 «Հմինյան ազգագրական ժողովածու», հ. 2, էջ 26—27:

17 Գ. Շ եր հ ն ց, Վանա սազ, Բ մաս, Թիֆլիս, 1899, էջ 14:

18 «Ազգագրական հանդես», գիրք 10, էջ 252:

Վերը կատարված քննարկումները հնարավորություն են տալիս մտածելու, որ քրիստոնեական ծեսը իր հիմքով, ինչպես նաև «Ավետիս-ալելուիաների» երգաշարը սկզբում կապված են եղել հայկական նախկին ամանորյա տոների հետ (Բարեկենդան, Նավասարդ), իսկ քրիստոնեության մուտքից հետո հարմարեցվել են քրիստոնեական Ամանորին և Քրիստոսի ծննդյան տոնին, Այս է պատճառը, որ այդ օրերին երգվող ժողովրդական «Ավետիս-ալելուիաների» մեջ որոշակիորեն առկա են նոր տարվա տոնին նվիրված մոտիվներ:

Ամանորի երգերի առանձնահատկությունն էր նաև հասարակական-տնտեսական կյանքի շերտավորված վիճակի արտահայտությունը: Կային երգեր՝ նվիրված երկրագործին, անասնապահին, առևտրականին, քաղաքի բնակչին, արհեստավորին: Մարդու անհատական կյանքը, իր բարդ կողմերով, նույնպես դրսևորվել է այդ երգերի մեջ: Կան ամբողջական երգեր, ինչպես նաև մոտիվներ, նվիրված պանդուխտին, ամուսնացող երիտասարդությանը, ճանապարհորդին, երեխա սպասող մորը, դժբախտ ճակատագիր ունեցողին և այլն:

Նոր տարվա վերը քննարկված երգաշարը իր բանաստեղծական կատարյալ տեսքը պահպանեց մինչև XIX դ. վերջը: Սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով դրանք դադարեցին անհրաժեշտություն նկատվելուց, իսկ XX դ. հայկական տեղահանումների հետևանքով՝ արագորեն մոռացվեցին: Վերջին 15 տարվա մեր շրջագալությունների ընթացքում, Սովետական Հայաստանից հաջողվել է գրանցել միայն հատուկ տոր հատվածներ, այն էլ՝ աղավաղված¹⁹:

Այդպիսին է, օրինակ, Ստեփանավանում գրանցված հետևյալ բեկորը.

Կտեր ֆողը խնդան փոշի.

Գելը տանի ձեր թշնամուն.

Մեկ պոչատ հավ, մեկ կըզտըլ եղ տու՝

Հալիլիվեն տանի:

Այստեղ բնորոշն այն է, որ հաղորդողը հիշում էր, թե երգը կատարվելիս է եղել Բարեկենդանին: Ինչպես պարզվում է գրանցված «Ավետիսների» հետ նույնիսկ մասնակի համեմատությունից, այն բոլորովին կորցրել է իր նախկին կատարյալ տեսքը:

Նոր տարվա տոնական տրամադրություններ կրելու հետևանքով Ամանորի ծիսակարգին են միացել նաև ժողովրդական շատ տաղեր: Օրինակ, Բալուում Նոր տարվա օրը երգվող ժողովրդական մի տաղում, որ կատարվում էր նաև հարսանեկան ծեսի ժամանակ, առանց որևէ արտաքին պաճուճանքի, արտահայտված են հայ գյուղացու Նոր տարվա տոնակատարության բնապաշտական սպասելիքները: Ահա այն.

Բարի եկար, Նոր տարի,

Տուր մեզի ցորեն գարի,

Լե, Լե, Լե, Լե, Լե,

¹⁹ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ (Ա. Ա. Օդարաշյանի նյութեր):

Մեր փեթակն ալիւր կուզե, լե, լե,
 Տանտիկինը եղ կուզե, լե, լե...
 Մեր օջախը փայտ կուզե, լե, լե...
 էգուն (այդի), պաղչին պտուղ տուր, լե, լե...
 Մեր աղջիկին փեսա տուր, լե, լե,
 Մեր տղային հարս մը տուր, լե, լե...
 Հիւրնտուֆին թող չըլլի,
 Քեսատուֆին թող չըլլի,
 Հեյրան Նոր տարի²⁰,

Հետաքրքիր է նաև Հաղպատում գրանցված հետևյալ երգը.

Բարով թող գայ ձեզ Նոր տարի,
 Մուրաղներուդ չիմ կատարի,
 Ձեր տուն մտնու հազար բարի,
 Աճար, ցորեն, կորեկ, գարի:
 Լիքը հորեր շատ ունենաք,
 Կարմիր օրեր շատ ունենաք,
 Կարմիր օրով, կարմիր շորով,
 Ուրախ կենաք միշտ կուշտ փորով²¹:

Չնայած Ամանորի ծիսակարգին միացած ժողովրդական երգերից շատ քչերն են մեզ հասել, սակայն նույնիսկ միայն վերը բերված օրինակներից պարզ երևում է, որ դրանք ևս ունեցել են զոհարերական մաղթանքի, տնտեսական ապահովությանը նպաստող հմայական բնույթ և կատարվել են նույնանման ծեսերի հետ:

Վերը քննարկված երգաշարից բացի, ձևավորվել և Ամանորի ծիսակարգին է միացել նաև աղոթք-հմայական բանաձևերի մի ամբողջ փունջ: Բացահայտորեն լինելով աղոթք-բանաձև, սրանք, որպես կանոն, կապված են բազմաշերտ ու բարդ հավատալիքային ծիսակարգի հետ և ավելի որոշակիորեն են արտահայտում Ամանորի տոնական ծիսակատարության հիմնական գաղափարը, այն է՝ հմայական խոսքի ուժով՝ ապահովել գալիք տնտեսական տարվա բարեկեցությունը: Այդ իսկ պատճառով աղոթք-բանաձևերը հիմնականում կապվում են զոհարերական բնույթի ծեսերի հետ, դառնում դրանց ներքին բովանդակության արտահայտիչը: Հետապնդող խնդրով էլ պայմանավորված է նրանց կառուցվածքը: Այդ բանաձևերը հանդես են գալիս զանազան իմիտատիվ-կոնտակտային հմայական գործողությունների հետ և բաղկացած են լինում մեկ, երկու կամ չորս տողից: Սրանք սովորաբար ունեն վերացական և ընդհանրացնող բնույթ, որը անշուշտ պայմանավորված է Նոր տարվա տոնակարգի բովանդակությամբ: Նկատի ունենք այն հանգամանքը, որ եթե տարեկան տոնացույցի ամեն մի տոն ունի որոշակի խնդիրներ և բովանդակություն, ապա Նոր տարվա տոնակատարությունը իր ծիսակարգով վերաբերում է ամբողջ գալիք տարվա հետ կապվող նկրտումներին:

20 Ծ. Տ Ե Ր-Պ ռ դ ո ս յ ա ն, Նոր տարւոյ տոնը հին և նոր հայոց քով, Վիեննա, 1952, էջ 78—79:

21 «Ազգագրական հանգես», գիրք 10, էջ 252:

Այժմ, չխորանալով մանրամասների մեջ, հիշենք մի երկու օրինակ: Զավաթում Նոր տարվա նախորդ գիշերը, երբ ընտանիքի անդամները քնում էին, երիտասարդները սպասում էին կեսգիշերին, որպեսզի գնային գետից ջուր բերելու, հավատալով, որ այդ ժամանակ գետը մի ժամով ոսկի է դառնում: Այնտեղ գնալիս մեկը հեծնում էր ակիշի, մյուսը՝ շամփուրի, երրորդը՝ խաչ-երկաթի վրա: Նրանց ավագը վերցնում էր ցորեն-գարով լիքը մի դյուզյում (պղնձե կուժ), իսկ մյուսները՝ մի քիչ խոտ: Աղմուկով գնում էին դետի ափ, խոտը դնում, նստում վրան և սպասում, թե ե՞րբ պետք է գետով ոսկի հոսի: Երկար սպասելուց հետո, ավագն ասում էր.

Քեզի կուտամ ցորեն, գարի,
Դուն ա ինձի տու բարի,
Շնորհաւոր Նոր տարի:

Դյուզյումի ցորենն ու դարին թափում էին գետը, տեղը ջուր լցնում և «Տգաք, քաշեք, ոսկի լցվավ» կանչելով վազում տուն, աշխատելով ետ շնայել: Տան մեծերը դիմավորում էին նրանց և ջուրը դատարկում՝ տեսնելու ոսկի կա՞, թե՞ ոչ²²:

Ակնում, կաղանդի նախորդ երեկոյան, համայնքը ընտրում էր չորս դեռատի հարսների, որոնց ամուսինները պանդխտության մեջ էին գտնվում, նրանց զուգում-զարդարում էին հարսանեկան ամենաշքեղ զգեստներով, մատանիներով, մանյակներով ու ապարանջաններով, գոտիների մեջ խրում էին մեկական ոսկյա մկրատ, ձեռքերը տալիս սպիտակ հողե փարչեր: Գիշերը, գաղտագողի, բացարձակ լռությամբ, նեղ ու խուլ արահետներով հարսները գնում էին գյուղի աղբյուրների ակունքը և Հին ու Նոր տարիների հանդիպման պահին, չորսը, սափորները միաժամանակ մեկնելով ջրի ակունքին, երգում էին.

Ջրի բարին, ջրի մորին
Անդնդային թագաւորին.
Ջուր կաղընդե՞ր ես:

Վերջին բառի հետ սափորը լցվող ջուրը ոսկյա մկրատներով կտրում էին և շտապ ետ դառնում, կարծելով, թե իրենց հետ տանում են ոսկի դարձած ջուրը:

Հետաքրքրական է այդ ծիսական սովորույթի շուրջ հյուսված ավանդությունը, ըստ որի, իբրև թե, աճապարանքով ետ վերադարձող ջահել հարսները հանդիպել են չար ոգիների, որոնք նրանց ճանապարհից շեղելով, տարել են դեպի անդնդախոր ձորերը և մատնել մահվան: Եվ, իբր, այդ դեպքից հետո ջրի ակունքով այլևս ոսկի չի հոսել²³, սակայն ծեսը դեռ երկար պահպանվել է:

Ինչպես տեսնում ենք, Ամանորի ծիսական երգաշարը իր ծագումով և էությունով կապված է եղել խոսքի ուժի բնապաշտական հավատքի հետ, ըստ որի ենթադրվում էր հմայության և թովչության առաջացնել այն, ինչ հիշատակվում էր խոսքում: Ահա այստեղ պետք է որոնել Ամանորի ծիսակարգում հմայական բանահյուսության այնքան նշանակալից լինելու պատճառը:

22 «Ազգագրական հանդես», գիրք 2, 1897, էջ 247—248:

23 Ա. Ք ե շ յ ա ն, Ակն և ակնցիք, Փարիզ, 1952:

О НОВОГОДНИХ РИТУАЛЬНЫХ ПЕСНЯХ

А. А. ОДАБАШЯН

Резюме

Календарный фольклор характеризуется прежде всего тем, что связан с определенным праздником. Фольклор, сопутствующий новому праздничному циклу, выражает его основные черты и проявляется в нескольких жанрах: 1. песни с названием «Аветис-аллилуйя», которые будут основным атрибутом праздника Рождества Христова, исполнялись также во время новогодних празднеств (Барекендан-Навасард—1-ое января); 2. магические формулы в одну, две, четыре строчки, с соответствующим ритуалом; 3. народные песни, перекачавшие сюда из свадебного цикла и «Антуни»; 4. авторские песни, близкие по содержанию к новому праздничному циклу.

Новогодний ритуальный фольклор характерен и тем, что в нем скрещивались дохристианские и христианские религиозные принципы. Он сохранил свою классическую форму и содержание до конца XIX в.